

ԱԼԵՔՍԱՆՂՐԻԱ - ԳՅՈՒՄԻ ԲՈՒՅՐ ԲԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ալեքսանդրիա, Վիրջինիա

Կոմիտեի առաքելությունը

Ամերիկայի Միացյալ Նահանգների Վիրջինիա նահանգի Ալեքսանդրիա և Հայաստանի հանրապետության Գյումրի քույր քաղաքների կոմիտեն աջակցում է Ալեքսանդրիա և Գյումրի քաղաքների միջև փոխըմբռնմանը, և բարեգործական նպատակով Գյումրիի բնակչության առավել խոցելի խմբերին՝ առավելապես երեխաներին և երիտասարդությանը, տրամադրում է հումանիտար և այլ օգնություն:

Ուղղվածությունը

Կոմիտեն հայտարարում է դրամաշնորհ-մրցույթ՝ քաղաքացիական, կրոնական, հասարակական, բնության պահպանության և այլ համայնքային կազմակերպությունների կողմից Գյումրիի բնակչության համար նախատեսված նախագծերի դիմում-հայտեր ֆինանսավորելու համար: Կոմիտեն առաջնային ուշադրություն կդարձնի այն նախագծերին, որոնք առնչվում են երեխաների և երիտասարդության կարիքների, կրթության և աշխատատեղերի ավելացման հնարավորություններին և խնդիրներին: Կոմիտեն նախընտրում է այնպիսի նորարական նախաձեռնություններ, որոնք կապահովեն բնակչության քանական ներգրավվածությունը ծրագրում, և բացահայտ ու տրամաբանական կապ կհաստատեն նախագծի գործընթացի և Գյումրիի բնակչությանն ուղղված սոցիալական և տնտեսական աջակցության միջև:

Իրավասու մասնակիցները

Այս դրամաշնորհն ուղղված է այն ՀԿ-ներին (պետական գրանցում ունեցող շահույթ չիտապնդող ոչ կառավարական կազմակերպություններին), որոնք կամ գրանցված են Հայաստանում, կամ ունեն Ամերիկայի Միացյալ Նահանգների գրանցում, և ակտիվորեն ներգրավված են Գյումրիի համար իրականացվող ծրագրերում:

Դրամաշնորհի չափը

Մրցութային սկզբունքներով ընտրված նախագծի իրականացման համար կոմիտեն սովորաբար տրամադրում է մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սահմաններում ֆինանսավորում:

Հայտերի ընտրության և մրցության պայմանները

Մրցութին մասնակցելու համար դիմորդ կազմակերպությունը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին և ներկայացնի հետևյալ փաստաթղթերը..

- Նախագծի հասցեագրած զարգացման խնդիրների, բարդությունների և հնարավորությունների նկարագրություն, ներառյալ՝
 - Շահառու խմբերի մասին հիմնական տեղեկատվությունը
 - Ծրագրի իրականացման ռազմավարության նկարագրությունը
 - Ծրագրի ակնկալիքներն ու արդյունքները

- Դիմորդ կազմակերպության մասին հիմնական տեղեկատվություն, ներառյալ՝ կազմակերպության օրինական կարգավիճակի, կառուցվածքի, ծավալի և սկզբունքների վերաբերյալ
- Դիմորդ կազմակերպության ներկայիս, ինչպես նաև անցյալում Գյումրիի անչլոդ Նախագծերի և գործունեության ունեցած հաջողությունների ապացույցներ և հիմնավորումներ
- Նախագծի ղեկավարման մանրամասն պլան և բյուջե
- Նախագծին համայնքի ֆինանսական և/կամ նյութական մասնակցության, աջակցության և ներդրումների բացահայտ հիմնավորում
- Երեք կամ ավելի հղումների անուններ և կոնտակտային ինֆորմացիա, որոնք կհաստատեն դիմորդ կազմակերպության ինքնությունը և ծրագրի ճշմարտացիությունը
- Նախագծի գործունեության և ֆինանսների համար պատասխանատու անձանց կոնտակտային ինֆորմացիան, ներառյալ՝ էլեկտրոնային հասցեները
- Ֆինանսավորման օգտագործման, նախագծի ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվության մանրամասն պլան
- Նախագծի ֆինանսական ժամանակացույցը, վերջնաժամկետները, և ակնկալվող ֆինանսական հոսքը

Հայտերի ձևաչափը

- Հայտերը պետք է ներկայացվեն անգլերենով, կազմված վերը շարադրված պահանջներին համապատասխան և MS Word (օրնակ .doc, .docx), Excel (.xls, .xlsx՝ բյուջեի համար) կամ Adobe .pdf. ձևաչափերով: Նախագիծ-առաջարկի իրականացման տևողությունը սովորաբար 6-ից 12 ամիս է:

Հաշվետվության պահանջները

Կոմիտեն ընտրված կազմակերպությունից պահանջելու է ֆինանսավորման վերաբերյալ ամբողջական հաշվետվություն ներկայացնել և հավաստիացնել, որ տրամադրվող գումարը օգտագործվում է ներկայացված հայտի նպատակներին համաձայն: Նախագծի ընթացքի հետ զուգահեռ, մասնակից կազմակերպությունը պարտավորվում է պարբերաբար (ամսեկան, եռամսյակային, կամ այլ հաճախականությամբ) կոմիտեին տեղեկատվություն ներկայացնել նախագծի ֆինանսական և ծրագրային կարգավիճակի վերաբերյալ: Նախագծի շահառուների կողմից նկարները և վկայությունները առանձնապես ողջունելի են:

Առաջարկ-հայտերի հանձնումը

Դիմում-հայտերը պետք է ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ grants@alexandria-gyumri.org, կամ հետևյալ FAX հասցեով՝ +1(202)638-1374 Ֆորեստ Վիլիոյթին:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը սույն թվականի մայիսի 15-ն է: Մրցության արդյունքները կհայտարարվեն սույն թվականի հունիս ամսին:

Առավել մանրամասն տեղեկատվությունների կամ կոմիտեի գործունեությանը ծանոթանալու համար այցելեք www.alexandria-gyumri.org.